# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

## 1. Առկա խնդիրներ

ՀՀ կողմից վավերացված և 1993 թվականի հունիսի 23-ից ՀՀ համար ուժի մեջ մտած Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) 1948թ. դեկտեմբերի 9-ի *Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին* կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվեցիա) սահմանում է, որ ցեղասպանությունը, անկախ նրանից կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որով պայմանավորվող կողմերը պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար:

Միաժամանակ, Կովենցիայի 3-րդ հոդվածը պատժելի արարքների թվին է դասում ոչ միայն ցեղասպանությունը, ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը, ցեղասպանություն կատարելու փորձը, հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ, այլև ***ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը***[1]:

ՀՀ գործող քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) «Խաղաղության եվ մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ գլխում՝ 393-րդ հոդվածով ցեղասպանությունը ամրագրված է որպես քրեորեն պատժելի արարք: Օրենսգիրքը չի նախատեսում ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը որպես քրեորեն պատժելի արարք, մինչդեռ Կոնվեցիայի 3-րդ հոդվածը սահմանում է, որ ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը ևս պետք է քրեորեն պատժելի լինի: Օրենսգրքի նույն գլխում առանձին հոդվածներ են նախատեսված ագրեսիվ պատերազմի (հոդված 384) և ագրեսիվ պատերազմի հրապարակային կոչերի (հոդված 385) համար:

Մինչդեռ, որպես ցեղասպանություն վերապրած ժողովուրդ՝ ՀՀ-ն առաջին երկրներից մեկը պետք է լիներ, որ քրեականացներ ցեղասպանության հրապարակային և ուղղակի հրահրումը՝ իրագործելով Կոնվենցիայի պահանջը: Դա նաև ցեղասպանությունների կանխարգելման հարցում և Կոնվենցիայի շարունակական իրացվելիությունն ապահովելու հետևողական և նպատակային քայլերից մեկը կլիներ ՀՀ համար: Ներկայացված նախագիծը միտված է այս բացի վերացմանը և ցեղասպանությունների կանխարգելման քայլերից մեկն է լինելու:

Ավելին, ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրով ցեղասպանության և մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելումը արտաքին քաղաքականության ոլորտում դիտարկված է որպես Կառավարության առաջնայնություններից մեկը[2]:

---

[1] Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եվ պատժելու մասին կոնվենցիա https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75835

[2] ՀՀ կառավարությունը արտաքին քաղաքականության ոլորտում գործում է
-Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման գործընթացի շարունակականությունն ապահովելու ուղղությամբ,
-ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ՝ շարունակելով առաջամարտիկի դեր խաղալ այս հարցում իրականացվող միջազգային ջանքերում: Այս առումով Կառավարությունը շարունակելու է հետամուտ լինել նաև ազգային, էթնիկ, կրոնական և

Ի կատարումն Կոնվենցիոն պահանջի՝ մի շարք երկրներ քրեականացրել են ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրման հանցակազմը: Տարբեր պետությունների օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ որպես կանոն քրեորեն պատժելի արարքների թվին են դասվել ոչ միայն ցեղասպանությունը, այլև դրա հրապարակային կոչերը, ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը կամ ցեղասպանություն իրականացնելու վերաբերյալ կոչ պարունակող նյութեր կամ ցեղասպանություն հրահրելու վերաբերյալ նյութեր տարածելը կամ այդ նպատակով պատրաստելը: Մասնավորապես համանման կանոնակարգումներ են առկա Ֆիանսիայի[3], Իտալիայի[4], Ուկրանիայի[5], Ալբանիայի[6], Ավստրալիայի[7], Լատվիայի[8], Ռումինիայի[9], Մալթայի[10], Խորվաթիայի[11] և մի շարք այլ երկրների քրեական օրենսդրություններում:

Ինչ վերաբերում է նշված հանցագործությանն առնչվող դատական պրակտիկային, ապա ցեղասպանության հրահրումը՝ որպես միջազգային հանցագործություն, փաստացի դատապարտվել է 1946 թվականին, երբ Յուլիուս Շտրայխերն ու Հանս Ֆրիցշեն պատասխանատվության ենթարկվեցին Նյուրնբերգի միջազգային ռազմական դատարանի կողմից: Չնայած «Ցեղասպանության հրահրում» արտահայտությունը, որպես այդպիսին, դեռ չէր գործածվել, մեղադրյալները պատասխանատվության ենթարկվեցին մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների համար: Այնուամենայնիվ, մեղադրանքները հիմնված են եղել

---

ռասսայական հողի վրա խտրականության և անհանդուրժողականության դրսևորումների դեմ միջազգային պայքարին:
ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման Հավելված
https://www.gov.am/files/docs/3133.pdf

[3] Code penal, Version consolidée au 25 mars 2020, Chapitre Ier: Du genocide Article 211-2
https://www.legifrance.gouv.fr/affichCode.do;jsessionid=A4990BFCEE1AE827C85C9A67C31C1AE6.tplgfr43s_2?idSectionTA=LEGISCTA000006165393&cidTexte=LEGITEXT000006070719&dateTexte=20200420

[4] CODICE PENALE (dalla L. 19 luglio 2019, n. 69,) Art. 604-bis.
https://www.altalex.com/documents/news/2014/10/28/dei-delitti-contro-la-persona

[5] Уголовный кодекс Украины от 5 апреля 2001 года № 2341-III (с изменениями и дополнениями по состоянию на 17.03.2020 г.) ч 2 ст. 442**.** (Геноцид)
https://online.zakon.kz/document/?doc_id=30418109#pos=3740;-56

[6] Criminal code of the Republic of Albania**, (**Amended by law no.89/2017)
Article 74/a Computer dissemination of materials favoring genocide or crimes against humanity https://www.legislationline.org/download/id/8235/file/Albania_CC_1995_am2017_en.pdf

[7] Criminal Code Act 1995, Compilation No. 131 (This is a compilation of the Criminal Code Act 1995 that shows the text of the law as amended and in force on 20 March 2020 (the compilation date))
80.2D ( Advocating genocide) https://www.legislation.gov.au/Details/C2020C00120

[8] Criminal Law of the Republic of Latvia (1998, amended 2018) ,Section 71.1 (Invitation to Genocide,)
https://www.legislationline.org/download/id/8266/file/Latvia_CC_1998_am2018_en.pdf

[9] Penal Code of July 17, 2009 (* updated *) (Law no. 286/2009) (updated until February 27, 2017 *) Article 438 Genocide,4,
https://www.legislationline.org/download/id/8291/file/Romania_Penal%20Code_am2017_en.pdf

[10] Criminal Code of the Republic of Malta, This Code was subsequently amended by Ordinances:… Act III of 2020. Genocide. Added by:XXIV.2002.13.,
http://www.justiceservices.gov.mt/DownloadDocument.aspx?app=lom&itemid=8574&l=1

[11] Criminal Code of the Republic of Croatia Article 88 (2) (3)
https://www.legislationline.org/download/id/7896/file/Croatia_Criminal_Code_2011_en.pdf
Kazneni zakon pročišćeni tekst zakona (NN 125/11, 144/12, 56/15, 61/15, 101/17, 118/18, 126/19 na snazi od 01.01.2020) članak 88 (3) https://www.zakon.hr/z/98/Kazneni-zakon

այն արարքների վրա, որոնք այսօր կազմում են ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրման հանցակազմը[12]:

«Հրահրմանը» վերաբերող Կոնվենցիայում պարունակվող դրույթը ընդգծվեց Ռուանդայի ցեղասպանության համատեքստում[13]: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1994 թվականին 955 բանաձևով ստեղծված Ռուանդայի միջազգային քրեական դատարանը Ժ.-Պ. Ակայեսուի գործի շրջանակներում առաջին անգամ պատասխանատվության ենթարկեց մեղադրյալին ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրման համար: Ռուանդային միջազգային քրեական դատարանը, նշված գործի շրջանակներում, ցեղասպանությունը դասեց առանձնապես ծանր հանցագործությունների շարքին՝ ընդգծելով, որ նման հանցագործության ուղղակի և հրապարակային հրահրումը ենթակա է պատժի, նույնիսկ եթե նման հրահրումը չի հանգեցրել հանցագործի սպասվելիք արդյունքին[14]:

1997 թվականին Ռուանդայի միջազգային քրեական դատարանը երեք ռուանդացիների մեղադրանք առաջադրեց «ցեղասպանության հրահրման» համար[15]: Առաջին անգամ մասնավոր լրատվամիջոցների ներկայացուցիչներ Ֆերդինանդ Նահիմանը և Ժան-Բոսկո Բարայագվիզը Ռուանդայում Radio-Television Libre des Mille Collines (RTLM) լրատվական կազմակերպության հիմնադիրները[16], ինչպես նաև Հասան Նգեզեն[17] Ռուանդայի “Kangura” թերթի նախկին խմբագիրը, դատարանի առջև կանգնեցին՝ զանգվածային լրատվության միջոցները որպես հութու ծայրահեղականների կողմից թութսիների նկատմամբ բռնության կոչերի խրախուսման և հրահրման միջոց օգտագործելու համար[18]:

---

[12] NTERNATIONAL MILITARY TRIBUNAL (NUREMBERG) Judgment of 1 October 1946 https://crimeofaggression.info/documents/6/1946_Nuremberg_Judgement.pdf

[13] 1994 թվականի ապրիլից մինչև հուլիս ընկած ժամանակահատվածում հութու մեծամասնության անդամները, գործելով մաչետեի, հրազենի և զենքի այլ տեսակներով, սպանել են մինչև մեկ միլիոն մարդ, որտեղ զոհերի ճնշող մեծամասնությունը կազմում էին Թութսի փոքրամասնության ներկայացուցիչները “Rwanda: How the genocide happened”, BBC News, 17 May 2011, available at; https://www.bbc.com/news/world-africa-13431486

[14] The Prosecutor v. Jean-Paul Akayesu (Trial Judgement), ICTR-96-4-T, International Criminal Tribunal for Rwanda (ICTR), 2 September 1998, available at: https://unictr.irmct.org/en/cases/ictr-96-4

[15] The Prosecutor v. Ferdinand Nahimana, Jean-Bosco Barayagwiza, Hassan Ngeze (Appeal Judgment), ICTR-99-52-A, International Criminal Tribunal for Rwanda (ICTR), 28 November 2007, available at: https://unictr.irmct.org/en/cases/ictr-99-52

[16] Ֆերդինանդ Նահիմանան և Ժան-Բոսկո Բարայագվիզան՝ Radio Télévision Libre des Milles Collines (RTLM) ռադիոկայանի հիմնադիրները, հրապարակային ուղղակի և անուղղակի սպանելու կոչեր են հնչեցրել, երբեմն, նույնիսկ հայտնել սպանության ենթակա մարդկանց անուններն ու գտնվելու վայրերը: Զանգվածային սպանություններին նախորդող օրերին և դրանց ընթացքում RTLM-ն օգնություն է ստացել Ռուանդայի ռադիոյից, որը պատկանում է կառավարությանը: Ռադիոյով կառավարվող հաղորդիչների ցանցի միջոցով կոչերը հնչել են ամբողջ երկրով մեկ: 2000 թվականի հոկտեմբերի 23-ին սկսված Ռուանդայի «Լրատվամիջոցների նկատմամբ դատական գործընթացի» կենտրոնում խոսքի ազատության իրավունքի հարց էր դրված: INCITEMENT TO GENOCIDE IN INTERNATIONAL LAW https://encyclopedia.ushmm.org/content/en/article/incitement-to-genocide-in-international-law

[17] Ցեղասպանությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում հրապարակել է թիրախային հոդվածներ, որոնք ապամարդկայնացնում էին թութսիներին՝ որակելով վերջիններիս որպես ինյենզի (խավարասերների), չնայած երբեք անմիջականորեն նրանց սպանության կոչ չի արել: Տե՛ս նույնն տեղում:

[18]Մեղադրող կողմը ամբաստանյալներից յուրաքանչյուրին առաջադրեց ուղղակի պատասխանատվության ենթարկել ցեղասպանության, ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրության, ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրման, ցեղասպանություն կատարելու փորձի, ցեղասպանության կատարման մեջ հանցակցության, մարդկայնության դեմ հանցագործությունների՝ հետապնդման, ոչնչացման և սպանության համար: Միավորված ազգերի

Հետագայում Ռուանդայի միջազգային քրեական դատարանը ևս մի քանի գործի շրջանակներում անդրադարձել է ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրման պատժելիության հարցին, մասնավորապես Մեղադրողն ընդդեմ Սայմոն Բիկինդիի[19], Մեղադրողն ընդդեմ Էդուարդ Կարեմերայի և Մաթյե Նգիրումպացեի[20], Նիրամասուխուկոն և ուրիշները[21] գործերում և այլն:

## 2. Առաջարկվող կարգավորումները

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է՝ քրեականացնել ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը և Օրենսգիրքը լրացնել նոր 393.1-ին հոդվածով՝ «Ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը» վերտառությամբ:

«Ուղղակի հրահրումը» քննարկվող արարքներում պետք է նշանակի, որ հրահրումը, կոչը պետք է լինի հստակ և բովանդակային առումով տարընկալումների տեղիք չտա: Միաժամանակ, հրահրումը պետք է լինի հրապարակային, ինչը նշանակում է տեղեկատվության տարածումը կամ որևէ կերպ այն հանրությանը մատչելի դարձնելը պետք է կրի հրապարակային բնույթ՝ անկախ տարածման եղանակներից, (համացանց, հրապարակային կոչ, գրավոր, բանավոր խոսք): Այն պետք է լինի ընկալելի, հասկանալի, լսելի անձանց լայն շրջանակի համար: Ցեղասպանության ուղղակի և

---

կազմակերպության Ռուանդայի միջազգային քրեական դատարանը մեղադրյալներին մեղավոր ճանաչեց ցեղասպանության, ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրության, ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրման և հետապնդումների և ոչնչացման համար մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների կատարման մեջ: Դատարանը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Առանց հրազենի, մաչետեի կամ որևէ այլ զենքի դուք հազարավոր անմեղ քաղաքացիական անձանց մահվան պատճառ եք դարձել», ապա ձևակերպելով դատավճիռը՝ դատարանը նշեց. « ... ՁԼՄ-ների ընդունակ են ստեղծել և ոչնչացնել մարդկային հիմնարար արժեքներ: Նրանք, ովքեր վերահսկում են ՁԼՄ-ները, պատասխանատվություն են կրում դրանց հետևանքների համար»: Մեղադրող կողմն ապացուցեց հրահրման «ուղղակի» բնույթը՝ պարզաբանելով, որ ամբաստանյալներն օգտագործել են էվֆեմիզմներ, ինչպիսիք են՝ «գնա աշխատանքի» արտահայտությունը՝ որպես թութսիների սպանության կոչ: Ավելի մանրամասն տես՝ INCITEMENT TO GENOCIDE IN INTERNATIONAL LAW https://encyclopedia.ushmm.org/content/en/article/incitement-to-genocide-in-international-law

[19] Դատարանը Բիկինդիին մեղավոր է ճանաչել ***ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրման*** մեջ: Դատարանը պարզել է, որ 1994 թվականի հունիսի վերջին Գիսենյիի պրեֆեկտուրայում՝ գտնվելով «Ինտերահամվ» ավտոշարասյան կազմում, Բիկինդին գտնվել է երգեր հեռարձակող բարձր հաղորդակցման համակարգերով հագեցած ավտոմեքենայում և նա օգտագործել է բարձր կապի համակարգը կոչ անելով հութուներին ապստամբել և ոչնչացնել Թութսիներին: Դատարանը Բիկինդիին դատապարտել է տասնհինգ տարվա ազատազրկման: Տես՝ *The Prosecutor v. Simon Bikindi (Judgment)*, ICTR-01-72-T, International Criminal Tribunal for Rwanda (ICTR), 2 December 2008, available at: https://unictr.irmct.org/sites/unictr.org/files/cases/ictr-01-72/public-information/en/profile-bikindi.pdf

[20] Կարեմերան և Նգիրումպատեն դատապարտվեցին ցեղասպանության, ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրության համար, ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրման, բռնաբարության և բնաջնջման համար՝ որպես մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն, և Կոնվենցիայի 3-րդ հոդվածի լուրջ խախտումների համար: Նրանք դատապարտվել են ցմահ ազատազրկման: Տես՝ The Prosecutor v. Edouard Karemera & Matthieu Ngirumpatse, ICTR-98-44-T, available at; https://unictr.irmct.org/en/cases/ictr-98-44

[21] Մեղադրող կողմը նրանցից յուրաքանչյուրին առաջադրեց մեղադրանք ցեղասպանության, ցեղասպանության իրականացման նպատակով դավադրության, ցեղասպանության հանցակցության, մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների, որոնք կապված են բնաջնջման, սպանության, հետապնդման և այլ անմարդկային գործողությունների հետ և կյանքի նկատմամբ բռնության՝ որպես ռազմական հանցագործություն կատարման համար: Նրանք բոլորը, բացառությամբ Նթահոբալի, մեղադրվեցին ցեղասպանության իրագործման ուղղակի և հրապարակային հրահրման համար: Տես՝ NYIRAMASUHUKO et al. (Butare), (ICTR-98-42-A), available at; https://www.legal-tools.org/doc/1d2476/pdf/

հրապարակային հրահրումը ինքնին արդեն իսկ մեծ վտանգավորություն է ներկայացնում, սակայն այն հանրության համար առավել վտանգավոր է դառնում, երբ դրսևորվում է զանգվածային լրատվության միջոցներով, համակարգչային համակարգի միջոցով, կատարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, կազմակերպված խմբի կողմից կամ անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով: Արդյունքում նշվածները ներկայացվել են որպես քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներ: Այդ իսկ պատճառով նախագծով առաջարկվում է նախատեսել առավել խիստ պատիժ նշված արարքների համար[22]: Մանավորապես, առաջարկվում է, որ ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը պետք է պատժվի ազատազրկմամբ՝ ութից տասը տարի ժամկետով: Նույն արարքի համար, որը կատարվել է զանգվածային լրատվության միջոցներով, համակարգչային համակարգի միջոցով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առաջարկվում է սահմանել ազատազրկում տասից տասնչորս տարի ժամկետով: Իսկ, եթե վերը նշված արաքները կատարվել են անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով կամ կազմակերպված խմբի կողմից առաջարկվել է սահմանել ազատազրում՝ տասնչորսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկում:

Հարկ է նկատել, որ Նախագծով լրացվող հոդվածն ընդգրկված է 393-397-րդ հոդվածների մեջ և ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիները և ՀՀ մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձինք նույն օրենսգրքի 190-րդ, 200-րդ, 201-րդ, 311-313-րդ, 384-րդ, 386-391-րդ, 393-397-րդ հոդվածներով նախատեսված հանցանքները կատարելու համար ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով՝ անկախ հանցանքը կատարելու վայրի պետության քրեական օրենսգրքով այդ արարքը նախատեսված լինելուց կամ չլինելուց:

Բացի այդ նույն հոդվածի 3-ր և 4-րդ մասերի համաձայն մասերի համաձայն՝ Օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ-ում մշտապես չբնակվող, քաղաքացիություն

[22] Հարկ է կատել, որ արտասահմանյան տարբեր երկրներ այս հանցագործությունը դասել են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, որի համար հիմնականում որպես պատիժ նախատեսում են ազատազրկում տարբեր ժամկետներով կամ ցմահ ազատացրկում: Դատական պրակտիկան վկայում է, որ այս արարքի համար որպես պատիժ կիրառելի է նաև ազատազրկումը՝ 15, 30,35 տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկումը (մանրամասն տես, Code penal, Version consolidée au 25 mars 2020, Chapitre Ier: Du genocide Article 211—2 https://www.legifrance.gouv.fr/affichCode.do;jsessionid=A4990BFCEE1AE827C85C9A67C31C1AE6.tplgfr43s_2?idSectionTA=LEGISCTA000006165393&cidTexte=LEGITEXT000006070719&dateTexte=20200420, CODICE PENALE (dalla L. 19 luglio 2019, n. 69,) Art. 604-bis., Уголовный кодекс Украины от 5 апреля 2001 года № 2341-III (с изменениями и дополнениями по состоянию на 17.03.2020 г.) ч 2 ст. 442, Criminal code of the Republic of Albania, (Amended by law no.89/2017) Article 74/a https://www.legislationline.org/download/id/8235/file/Albania_CC_1995_am2017_en.pdf , The Prosecutor v. Edouard Karemera & Matthieu Ngirumpatse, ICTR-98-44-T, available at; https://unictr.irmct.org/en/cases/ictr-98-44, NYIRAMASUHUKO et al. (Butare), (ICTR-98-42-A), available at; https://www.legal-tools.org/doc/1d2476/pdf / և այլն):

չունեցող անձինք, ովքեր հանցանքը կատարել են ՀՀ տարածքից դուրս, ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանք կատարել են՝

1) այնպիսի հանցագործություններ, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով.

2) այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ, որոնք ուղղված են ՀՀ շահերի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և ազատությունների դեմ:

*Նույն հոդվածի երրորդ մասում սահմանված նորմերը կիրառվում են, եթե օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք տվյալ հանցագործության համար չեն դատապարտվել մեկ այլ պետությունում և քրեական պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության տարածքում:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 189.1, 190, 217, 217[1] , 219-221, 224, 226, 226.1-ին, 233, 234, 250, 299, 302-307, 329, 329.1, 330, ***384-397[1]*** հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները, իսկ Նախագծով առաջարկվող լրացումը կատրավում է **384-397[1]** հոդվածների միջակայքում՝ 393.1., քրեական ենթակայության հարցն ինքնին կարգավորված է, և այս օրենսգիրքը լրացման կարիք չունի:

**Ակնկալվող արդյունքը**՝ Նախագծի ընդունմամբ կլրացվի այն բացը, որն այսօր կա ՀՀ քրեական օրենսգրքում: Որպես ցեղասպանություն վերապրած ժողովուրդ, քրեականացնելով ցեղասպանության հրապարակային և ուղղակի հրահրումը, ՀՀ-ն կշարունակի ցեղասպանությունների կանխարգելման գործընթացին ուղղված քայլերը՝ միաժամանակ ապահովելով Կոնվենցիայի շարունակական իրացվելիությունը: Նախագծի ընդունմամբ ՀՀ-ն կկատարի Կոնվենցիայից բխող պարտավորությունը՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված արաքների պատժելիության տեսանկյունից: Մարդկայնության դեմ այդ հանցագործության ճանաչումը կնպաստի տարածաշրջանի անվտանգությանը, կայունությանը և ժողովուրդների միջև համերաշխությանը, ինչպես նաև ոճրագործությունների կանխարգելմանը[23]:

[23] ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ա որոշման Հավելված https://www.gov.am/files/docs/3133.pdf